Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2015 թ.
ապրիլի 27-ի N 309 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

«ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» , «ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ՇԻՐԱԿ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ԵՎ «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՒ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Դ. Հարությունյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար (հանձնաժողովի նախագահ)
Ա. Հարությունյան	- ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)
Ա. Մկրտչյան	- ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Պ. Սաֆարյան	- ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Գ. Բաղալյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Բախշյան	- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ
Խ. Հակոբյան	- ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Շ. Կիրակոսյան	- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի տեղակալ (համաձայնությամբ)
Կ. Արեյան	- Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ)

Ֆ. Բաշոյան	- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Ա. Մարկոսյան	- ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2015 թ.
ապրիլի 27 -ի N 309 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

«ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ՇԻՐԱԿ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ԵՎ «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՒ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ ջրամատակարար ընկերություններ) կողմից օգտագործվող ու պահպանվող (այսուհետ՝ սպասարկվող) ջրային համակարգերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 888-Ն որոշմամբ նախատեսված գույքի (այսուհետ՝ գույք) օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացը կազմակերպող միջգերատեսչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) ստեղծվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 140-Ա որոշման 2-րդ կետի:

2. Հանձնաժողովն իր աշխատանքներում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն աշխատակարգով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Հանձնաժողովի խնդիրը սահմանված կարգով ջրամատակարար ընկերությունների կողմից սպասարկվող գույքի վարձակալությամբ փոխանցման գործընթացի կազմակերպումն է:

4. Հանձնաժողովն իր առջև դրված խնդրի լուծման նպատակով՝

1) կազմակերպում է ջրամատակարար ընկերությունների կողմից սպասարկվող գույքի վարձակալությամբ փոխանցման աշխատանքները՝ վարձակալի ընտրությունը.

2) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում վարձակալի ընտրության ձևի (կարգի) վերաբերյալ առաջարկություն՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 883-Ն որոշմամբ հաստատված Պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագրի 4-րդ կետի 7-րդ ենթակետը և նկատի ունենալով այդ գործընթացների անցումային խորհրդատուի կարծիքը.

3) հավանություն է տալիս վարձակալի ընտրության փաստաթղթերի փաթեթին, որի հիման վրա լիազորված պետական մարմինն այն ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը.

4) հանձնաժողովն իր որոշմամբ կարող է ստեղծել հայտերը (առաջարկությունները) գնահատող խումբ.

5) ամփոփում է վարձակալի ընտրության արդյունքները, որի հիման վրա լիազորված պետական մարմինն այն սահմանված կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը.

6) իրականացնում է հանձնաժողովի առջև դրված խնդրի լուծմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով սահմանված այլ գործառույթներ.

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովի գործունեությունը կազմակերպվում է նիստերի և խորհրդակցությունների միջոցով: Հանձնաժողովի նիստերն ու խորհրդակցությունները հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ հանձնաժողովի նախագահի կողմից, ինչպես նաև՝ հաշվի առնելով հանձնաժողովի անդամների առաջարկությունները:

6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին՝ բացառությամբ սույն աշխատակարգի 19-րդ կետում նշված նիստերի, որոնք իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը:

7. Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը: Հանձնաժողովի նախագահն ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, հանձնաժողովի գործունեությանն առնչվող անհրաժեշտ փաստաթղթերն ու գրությունները: Արձանագրություններն ստորագրում են նաև նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամները:

8. Հանձնաժողովի անդամները, հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, իրականացնում են հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման և հանձնաժողովի կողմից քննարկվող համապատասխան խնդիրների լուծման հետ կապված աշխատանքներ:

9. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալի ձայնը վճռորոշ է:

10. Հանձնաժողովի նիստի օրակարգը կազմվում է հանձնաժողովի նախագահի կողմից՝ հաշվի առնելով հանձնաժողովի անդամների առաջարկությունները: Նիստի օրակարգը հաստատվում է հանձնաժողովի կողմից:

11. Հանձնաժողովի անդամները հանձնաժողովի նիստերի հրավիրման, դրանց տեղի և ժամանակի մասին տեղեկացվում են նիստի հրավիրման օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ, և նրանց են տրամադրվում նիստի օրակարգն ու քննարկվելիք հարցերին վերաբերող համապատասխան նյութերը՝ բացառությամբ հանձնաժողովի նախագահի կողմից հրատապ հարցերի քննարկման նպատակով հրավիրվող նիստերի:

12. Հանձնաժողովի նիստերին կարող են սահմանված կարգով հրավիրվել նաև Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների, այլ պետական մարմինների և կազմակերպությունների համապատասխան ներկայացուցիչներ՝ հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամների առաջարկությամբ:

13. Հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են արձանագրությամբ, որում նշվում են նաև անվանական քվեարկության արդյունքները:

14. Հանձնաժողովի արձանագրությունների կազմումը, սույն աշխատակարգի 11-րդ կետում նշված աշխատանքները, վարձակալի ընտրության մասին հայտերի (առաջարկությունների) գրանցումը, հանձնաժողովի գործունեության հետ կապված համապատասխան փաստաթղթերի պահպանումը և հանձնաժողովի խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան այլ գործառույթներ իրականացվում են «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կողմից:

15. Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամները: Հատուկ կարծիքի առկայության դեպքում այն գրավոր ներկայացվում է հանձնաժողովի նախագահին և կցվում է արձանագրությանը:

16. Հանձնաժողովի առաջին նիստը գումարվում է սույն աշխատակարգն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում:

17. Հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի անդամներն իրականացնում են նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով իրենց վերապահված այլ լիազորություններ:

IV. ՎԱՐՁԱԿԱԼԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

18. Հանձնաժողովն իր համապատասխան նիստում ամփոփում է վարձակալի ընտրության արդյունքները և հրապարակում է հաղթող մասնակցին կամ հայտարարում է վարձակալի ընտությունը չկայացած լինելու մասին:

19. Հանձնաժողովի կողմից հայտերի (առաջարկությունների) քննարկման և արդյունքների ամփոփման նիստերին, բացի հանձնաժողովի անդամներից, այլ անձինք չեն մասնակցում:

20. Հայտեր (առաջարկություններ) ներկայացրած մասնակիցների լիազոր ներկայացուցիչներին, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների և համապատասխան միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին հնարավորություն է տրվում ներկա լինելու վարձակալի ընտրության արդյունքների հայտարարմանը, եթե հանձնաժողովն այլ որոշում չի ընդունում:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

21. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է (հանձնաժողովը լուծարվում է) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

22. Հանձնաժողովի գործունեության դադարումից (հանձնաժողովի լուծարումից) հետո հանձնաժողովի գործունեությանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման՝ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ